



## ԵԱՀԿ գրասենյակի աջակցությունը թունաքիմիկատների գերեզմանոցի առաջացրած վտանգների նվազեցման հարցում

ԵԱՀԿ գրասենյակի նախաձեռնությամբ միջազգային կազմակերպությունները միավորվել են թունաքիմիկատների գերեզմանոցի խնդրի լուծման համար՝ Չայաստանին աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոցը, որը գոյություն ունի դեռևս 1980-ական թվականներից, նախապես պարունակում էր 500 տոննա հնացած պարարտանյութ, հիմնականում Դ-ԴՏ: 3000 ք.մ.-ից ավելի տարածք զբաղեցնող գերազմանոցը նաև թունավորել է շրջակա հողը և սպառնում է շրջակայքի գյուղերին: Վերջերս ապօրինի կերպով հեռացվել է տարածքի ծածկույթը, և գերեզմանոցի պարունակությունը, ենթարկվելով անձրևների ազդեցությանը, էլ ավելի մեծ վտանգ է առաջացրել: Բացի այդ, գոյություն ունի նաև սողանքի վտանգ:

ԵԱՀԿ գրասենյակի ղեկավար դեսպան Սերգեյ Կապիտուց շնորհակալություններ է արտահայտում Հայաստանի Հանրապետության նախարար Արամ Հարությունյանի հետ ապրիլի 20-ին կայացած համադրական ժամանակ քննարկեց հարցի լուծմանն ուղղված համատեղ ջանքերը: Ապրիլի 30-ին ԵԱՀԿ գրասենյակի և Արտակարգ իրավիճակների նախարարության համատեղ ասուլիսում ներկայացվեց խնդրի լուծման ծրագիրը, որը ստեղծվել է ԵԱՀԿ գրասենյակի աջակցությամբ: «Մա արտակարգ իրավիճակ է, բայց միևնույն ժամանակ հնարավորություն է տալիս անդրադառնալու ոչ միայն այս ինչպիսին, այլև Հայաստանի բոլոր քիմիական թափոնների պարունակող վայրերին: Խիստ կարևոր է, որ կառավարությունը և միջազգային հանրությունը գործեն միասնաբար և որ դրա-

նում ներգրավված լինի նաև քաղաքացիական հասարակությունը», - ասաց ԵԱՀԿ գրասենյակի ղեկավարի տեղակալ Կարել Հոֆստրան: Արտակարգ իրավիճակների նախարարության փրկարարական ծառայության պետ գնդապետ Հովհաննես Եմիլյանն ավելացրեց, թե անհրաժեշտ է շտապ պարզել գերեզմանոցի պարունակության քաղաքային վտանգը, գնահատել վտանգը և հեռացնել ու վերացնել թունաքիմիկատները: ԵԱՀԿ գրասենյակի ջանքերն իրականացվում են հարավկովկասյան տարածաշրջանային «Շրջակա միջավայր և անվտանգություն» (ENVSEC) նախաձեռնության շրջանակներում: Նախաձեռնության նպատակը բնապահպանական համագործակցության և հետևողական զարգացման միջոցով ամբողջ տարածաշրջանում բնապահպանական հարցերում համագործակցության շրջանակի ստեղծումը և խաղաղության ու կայունության հաստատումն է:

ENVSEC ծրագիրը տրամադրել է փորձագետ, որը մշակել է հրատապ գործողությունների ծրագիր՝ վտանգը վերացնելու նպատակով: Ամփոփական վտանգը վերացնելուց հետո ԵԱՀԿ օժանդակությամբ կկազմվի թափոնների ոչնչացման երկարաժամկետ ծրագիր՝ իշխանությունների և միջազգային դերակատարների հետ համատեղ:



Պաշտպանիչ հագուստով փորձագետները այցելել են Նուբարաշենի թունաքիմիկատների գերեզմանոց: (ԵԱՀԿ)

## ՉԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի այցը Հայաստան

ՉԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի Դուրյա Միլյաուսկայի այցը հունիսի 17-ից 19-ը գտնվում էր Հայաստանում: Այցի ընթացքում Միլյաուսկայի Հայաստանի ղեկավարության հետ քննարկեց զանգվածային լրատվամիջոցների ոլորտում բարեփոխումները, այդ թվում անալոգային ինչ թվային հեռարձակման անցումը: Նա նաև հանդիպումներ ունեցավ քաղաքացիական հասարակության և միջազգային հանրության ներկայացուցիչների հետ: Մայիսի 18-ին Միլյաուսկայի մասնակցեց հեռարձակման թվայնացման վերաբերյալ հանրային քննարկմանը, որը կազմակերպել էր ԵԱՀԿ երևանյան գրասենյակը: Միջոցառմանը մասնակցում էին կառավարության ներկայացուցիչներ, պատգամավորներ, ինչպես նաև հեռուստառադիոընկերությունների, հասարակական և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ: Խորհրդածողովին ներկայացվեց



Հայաստանում ռադիոհեռուստատեսային հեռարձակման թվային համակարգին անցման հայեցակարգի վերաբերյալ փորձագիտական վերլուծությունը՝ պատրաստված ՉԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի գրասենյակի պատվերով: Վերլու-

ծության շրջանակներում ներկայացված են առաջարկություններ, որոնց նպատակը Հայաստանի իշխանություններին օժանդակելն է այնպիսի քաղաքականություն մշակելու համար, որ կօգնի անալոգային թվային հեռարձակմանը սահուն անցնելուն:

«Թվայնացման վերաբերյալ Հայաստանի ռազմավարությունը ձևավորելու է հեռարձակման դաշտը գալիք տարիների համար: Կարևոր է, որ ընդունվելիք օրենքները բազմաբնույթ տեղեկատվության և բարձրորակ հաղորդումների հնարավորություն ընձեռեն», - ասաց Միլյաուսկայի՝ դիմելով խորհրդածողովի մասնակիցներին: Նա շեշտեց, որ իր գրասենյակը պատրաստ է շարունակել աջակցել իշխանություններին լրատվամիջոցների ազատությանն առնչվող օրենսդրական բարեփոխումների հարցում: Այցից հետո, ՉԼՄ-ների ազատության հարցերով ԵԱՀԿ ներկայացուցչի գրասենյակի կողմից տրամադրվեց իրավական վերլուծություն՝ «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքում փոփոխությունների մասին: Վերլուծության ամբողջական տեքստը հայերենով և անգլերենով կարելի է ընթերցել հետևյալ հասցեով. [www.osce.org/fom](http://www.osce.org/fom):

### ԵԱՀԿ գրասենյակում քննարկվել են ոստիկանության բարեփոխումների նախաձեռնությունները

ԵԱՀԿ գրասենյակը մայիսի 14-ին կազմակերպել էր կորորդիանցիոն խորհրդակցություն, որին ներկա գտնվող Հայաստանի փոխստիկանապետ Արթուր Օսիկյանը, պետական միջազգային մարմինների ներկայացուցիչները և փորձագետները քննարկեցին ոստիկանության բարեփոխումներին առնչվող առաջարկությունները և համագործակցության հնարավոր ոլորտները: Միջոցառման մասնակիցները քննարկեցին ոստիկանական ծառայությունների բարելավման հարցերը, օրենսդրական նախաձեռնությունների շուրջ քաղաքացիական հասարակության հետ համագործակցությունը և միջազգային օժանդակությունը ոստիկանության բարեփոխումներին առավել արդյունավետ դարձնելու ձևերը: Գրասենյակի ղեկավար դեսպան Սերգեյ Կապինոսն ասաց, որ գրասենյակն աշխատում է նպաստել Հայաստանի ոստիկանության բարեփոխումների ընթացքին, որի նպատակը ժամանակակից ժողովրդավարական ոստիկանական մեթոդների զարգացումն է: «Մենք պատրաստ ենք օգնելու կառուցվածքային փոփոխությունների հարցում, ինչպես նաև շարունակելու աջակցությունը հանրային վստահության ամրապնդմանը», - ասաց Կապինոսը:

Պրն Օսիկյանը ներկայացրեց ոստիկանության բարեփոխումների նախաձեռնությունների համակողմանի փաթեթ, որոնք վերաբերում էին հասարակական կարգի պահպանությանը, ոստիկանական կրթության բարեփոխումներին, ճանապարհային ոստիկանությանը, վիզաների և անձնագրերի ընթացակարգերին, կազմակերպված հանցավորության դեմ պայքարին և ներքին հսկողությանն ու հակակոռուպցիոն միջոցառումներին: Առաջարկների մեջ ընդգրկված է համայնքային ոստիկանության մոտեցումը, որը 2008թ.-ից գործողության մեջ է դրվել ոստիկանության Արաբկիրի բաժնում: Միջոցառմանը ներկայացվեց ԵԱՀԿ աջակցությամբ ստեղծված ոստիկանական կրթության բարեփոխման փաթեթը՝ երկրի ոստիկանության բարեփոխումների ռազմավարության մեջ ընդգրկելու համար: Գրասենյակը ներկայացրեց նաև ժողովրդավարական ոստիկանության մեթոդների վերաբերյալ իր հրատարակումները: Հետագայում այն Օսիկյանը և դեսպան Կապինոսը հունիսի սկզբին Վիեննայում՝ ԵԱՀԿ քարտուղարությունում ներկայացրին Հայաստանի ոստիկանության բարեփոխումները ԵԱՀԿ մասնակից պետություններին:



Դեսպան Կապինոսը (ձախից) և ՀՀ փոխստիկանապետ Ա. Օսիկյանը ԵԱՀԿ գրասենյակում կայացած քննարկմանը: 14 մայիսի 2010թ. (ԵԱՀԿ/Գայանե Տեր-Ստեփանյան)

### ԵԱՀԿ գրասենյակի ղեկավարը քննարկել է դատական բարեփոխումները Արդարադատության նախարարի և Գլխավոր դատախազի հետ

ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի ղեկավարը մայիսի 4-ին Հայաստանի գլխավոր դատախազ Ադվան Հովսեփյանի հետ հանդիպման ընթացքում քննարկել է ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակի (ԺՀՄԻԳ) կողմից հրատարակված դատավարությունների դիտարկման մասին զեկույցում ամփոփված առաջարկների իրագործումը: Չեկույցը վերաբերում էր 2008թ. մարտի հետընտրական բռնություններից հետո տեղի ունեցած դատավարություններին: Կապինոսը բարձր գնահատեց Գլխավոր դատախազի կառուցողական մոտեցումը առաջարկներին: «Մենք շատ ուրախ էինք իմանալ, որ ԺՀՄԻԳ զեկույցի առաջարկների մի մասը ամփոփապես ընդունվել է և հասկանում ենք, որ որոշ առաջարկներ ժամանակ են պահանջում իրականացնելու համար», - ասաց Կապինոսը: Նա նաև ողջունեց Գլխավոր դատախազի խոստումը՝ ուսումնասիրել և սագրողների նկատմամբ բռնությունների լրագրող հաղորդված դեպքերը, ինչպես նաև բարձրացնել ոստիկանության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու դատախազության դերը, որին անդրադարձ էր եղել Գրասենյակի կողմից վերջերս հրատարակված զեկույցներից մեկում:

Իր հերթին Հովսեփյանն ասաց, որ դատախազությունը բարձր է գնահատում ԵԱՀԿ աջակցությունը թերությունների բացահայտման և համապարփակ լուծումներ գտնելու հարցում՝ Հայաստանում խթանելու օրենքի գերակայությունը և արդարադատության համակարգը: ԺՀՄԻԳ զեկույցը քննարկվեց նաև Արդարադատության նախարարի հետ հունիսի 1-ին կայացած հանդիպման ընթացքում: Դեսպան Կապինոսը բարձր գնահատեց արդարադատության նախարարության ջանքերը՝ ԵԱՀԿ ԺՀՄԻԳ դատավարությունների դիտարկման մասին զեկույցի առաջարկների իրականացման ուղղությամբ: Նա նաև իր պատրաստակամությունը հայտնեց ներդրում ունենալ դատական բարեփոխումների գործընթացում և միջազգային փորձագիտական աջակցություն տրամադրել քրեական դատավարության օրենսգրքի նախագծի մշակմանը: Նրանք նաև քննարկեցին քրեակատարողական համակարգի հետագա բարեփոխումները՝ միջազգային չափանիշների լրացիվ ներքո: Կապինոսը նաև ընդգծեց հավաքների ազատության իրավունքի ազատ և օրենքին համապատասխան իրականացման երաշխիքների կարևորությունը՝ որպես մարդու իրավունքների ոլորտում ստանձնած կարևորագույն պարտավորություն:

### ՀԱՄԱՌՑ

### ԵԱՀԿ գրասենյակի աջակցությունը Հայաստանին կոռուպցիայի դեմ պայքարում

Երևան, 23 ապրիլի - Երևանում ներկայացվեց ԵԱՀԿ աջակցությամբ իրականացվող ծրագիրը, որի նպատակը երթևեկության հաշվառման և վարորդական իրավունքի վկայականի քննությունների մոնիտորինգի միջոցով ճանապարհային երթևեկության կոռուպցիոն ռիսկերին անդրադարձնելն էր:



Աքիլլես հասարակական կազմակերպության կողմից՝ ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվող ծրագրի շրջանակներում անցկացվում էր վարորդական իրավունքի վկայականի թեստերի անցկացման ընթացակարգի մոնիտորինգ: Ծրագրում նաև ներառված էր վարորդներին՝ իրենց իրավունքների մասին իրազեկելու գործառույթ՝ հեռուստատեսային և ռադիո հաղորդումների, ինչպես նաև տեղեկատվական նյութերի և իրավաբանական խորհրդատվության միջոցով: Ծրագրի մեկ այլ արդյունքը երթևեկության կարգավորման բարելավման վերաբերյալ առաջարկների փաթեթն է:

### ԵԱՀԿ գրասենյակի աջակցությունը Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի փորձի փոխանակմանը

Երևան, 27 մայիսի - Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ներկայացուցիչները ամփոփեցին ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ իրականացված այցը Սլովենիա: Այցի նպատակն էր հզորացնել ինստիտուտի հնարավորությունները խոշտանգումները և վատ վերաբերմունքը կանխելու ուղղությամբ: Հայաստանյան փորձագետները հանդիպեցին Սլովենիայի օմբուդսմենի տեղակալի և այլ գործընկերների, ինչպես նաև հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ և Լյուբլյանայում այցելեցին ոստիկանության բաժին ու քրեակատարողական հիմնարկ: Նրանք նաև քննարկեցին Սլովենիայի մարդու իրավունքների օմբուդսմենի՝ որպես Ազգային կանխարգելիչ ազգային մեխանիզմի փորձը:

### ԵԱՀԿ գրասենյակի աջակցությունը Հայաստանի մրցակցային գործարար միջավայրի խթանման ջանքերին

Երևան, 2 հունիսի - ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի և ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի միջև համագործակցության հուշագիր ստորագրվեց, որի նպատակը այս ոլորտում օրենսդրության և պրակտիկայի կատարելագործմանը և երկրի կայուն սոցիալ-տնտեսական զարգացմանը աջակցելն է: Համաձայնագիրը նախատեսում է նաև, որ ԵԱՀԿ գրասենյակը աջակցություն կցուցաբերի միջազգային փորձին համապատասխան մրցակցային ռազմավարության ձևավորմանը: Գրասենյակը նաև կօգնի մշակել և ներդնել ցուցանիշների համապարփակ համակարգ, որը կաջակցի արդյունավետ մրցակցային քաղաքականության զարգացմանը, ինչպես նաև կխթանի Հայաստանի համագործակցությունը Միջազգային մրցակցային ցանցի հետ:



# Կապանում կայացած ԵԱՀԿ մոդել համաժողովի ընթացքում քննարկվել են բնապահպանական մարտահրավերները



ԵԱՀԿ մոդել համաժողովի մասնակից ուսանողները, Կապան, 7-8 մայիսի 2010թ.: (ԵԱՀԿ/Գոհար Հովսեփյան)

Կապանում մայիսի 7-8-ին կայացած ԵԱՀԿ մոդել համաժողովը նվիրված էր պայմանական երկրներ Վալուչիստանի, Դակաստանի և Աբրալայի բնապահպանական անվտանգության հարցերի լուծմանը՝ ԵԱՀԿ սկզբունքներին համաձայն: Երկօրյա միջոցառմանը մասնակցում էին Սյունիքի մարզի 24 ուսանող: ԵԱՀԿ Մշտական խորհրդի նմանակված նիստի օրակարգն ընդգրկում էր այնպիսի բնապահպանական և տնտեսական մարտահրավերներ, որոնք համապատասխանում են Սյունիքի իրական իրավիճակին: «Երիտասարդներին ԵԱՀԿ կառույցներին և որոշում կայացնելու գործընթացին ծանոթացնելը շատ կարևոր է, քանի որ այսպես նրանք ավելի լավ են տվորում անվտանգության հարցերը լուծելու մեխանիզմները: Հուսով եմ, որ այս փորձը նաև իրենց մարզում քաղաքացիական ակտիվության շարժառիթ կլինի», - ասաց ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ռազմաքաղաքական ծրագրի ղեկավար Գրեթե Ժիլիսկին: Երևանի պետական համալսարանի քաղաքագիտության բաժնի ուսանող Սաթենիկ Բաղդասարյանը, որը մասնակցում էր համաժողովին, ասաց. «Միջոցառումը մեզ հնարավորություն տվեց օգտագործելու բանակցային, խնդիրներ լուծելու և փաստարկելու մեր հմտությունները իրական կյանքին մոտ պայմաններում: Մենք հասկացանք, որ այսօրվա փոխկապակցված աշխարհում միայն ջանքերի մեկտեղումով և բոլոր երկրների համագործակցությամբ է հնարավոր դիմակայել համաշխարհային բնապահպանական մարտահրավերներին»:

Համաժողովից առաջ կազմակերպվել էին ԵԱՀԿ կառուցվածքի և տնտեսական-բնապահպանական ոլորտի, դիվանագիտության մասին դասախոսություններ, ինչպես նաև հանրային խոսքի և բանակցելու հմտություններին նվիրված դասընթացներ: Համաժողովը նման միջոցառումների շարքում երրորդն էր, որ կազմակերպված էր ԵԱՀԿ երևանյան գրասենյակի կողմից՝ ԵԱՀԿ սկզբունքները և արժեքները հայ երիտասարդներին ներկայացնելու նպատակով:

# ԵԱՀԿ գրասենյակի աջակցությամբ հիմնադրվել է դիվանագիտական դպրոց

Հայաստանի նոր դիվանագիտական դպրոցը փետրվարին բացեց իր դռները առաջին ուսանողների առջև: Դպրոցը հիմնադրել է Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը ԵԱՀԿ և Եվրամիության օժանդակությամբ, և այն Հայաստանում առաջին այդպիսի նախաձեռնությունն է, որի նպատակը ապագա դիվանագետներին համապարփակ մասնագիտական կրթություն տրամադրելն է: Դպրոցը նախատեսված է բարձրագույն կրթություն ստացածների համար, ուսման տևողությունը ինը ամիս է, իսկ դասավանդումն իրականացնում են հայաստանցի և արտասահմանյան անվանի դասախոսներ: Այն կազմակերպվում է, որ լավագույն շրջանավարտներին աշխատանք կառաջարկվի Հայաստանի արտաքին գործերի նախարարությունում: ԵԱՀԿ գրասենյակը, բացի դպրոցի համար դասախոսներ գտնելուց և ուսումնական ծրագիրը մշակելուց, տրամադրել է նաև սարքավորումներ համակարգչային լաբորատորիայի համար: Գրասենյակը նաև օժանդակություն է տրամադրել դիմորդների ընտրության հարցում: Հայաստանում դիվանագիտական ակադեմիա



Երևանի նորաբաց դիվանագիտական դպրոցի ուսանողները դասախոսությունից առաջ ուսումնասիրում են փաստաթղթեր, 29 մարտի 2010թ.: (ԵԱՀԿ/Ռուզաննա Բաղդասարյան)

հիմնադրելու գաղափարը ծագել է դեռևս 2006թ.-ին, երբ ԵԱՀԿ գրասենյակը արտաքին գործերի նախարարության աշխատակազմի համար հատուկ դասընթացների ծրագիր էր կազմակերպել: Գրասենյակն առաջարկեց հիմնադրել դպրոց, որտեղ կպատրաստվեին ապագա որակյալ դիվանագետներ: Հաջորդ քայլով գրասենյակը պատվիրեց կարիքների գնահատում, որն իրականացրեց փորձագետների մի խումբ Համբուրգում գործող CORE հետազոտական ինստիտուտից (ԵԱՀԿ հետազոտությունների կենտրոն): Խումբը կազմեց մի փաթեթ, որում ընդգրկված էին դպրոցի կարգավիճակի, գործառնությունների, ուսուցմանը, հնարավոր դասախոսություններին և կառավարմանն առնչվող առաջարկություններ: Ուսուցման ծրագրում տեղ են գտել Հայաստանի արտաքին քաղաքականության, դիվանագիտության տեսության և պատմության, միջազգային իրավունքի և առևտրի կանոնների, ինչպես նաև միջազգային հարաբերությունների վերաբերյալ դասախոսություններ: Ներառված է նաև Եվրոպական ինտեգրացումը, Հայաստանի հարաբերությունները հարևանների հետ և միջազգային կազմակերպությունների գործունեությունը: Դպրոցում քննարկվել են նաև այնպիսի համաշխարհային մարտահրավերներ, ինչպիսիք են՝ աղբատուրությունը, բնապահպանական սպառնալիքները և ահաբեկչությունը: Ծրագրի երկրորդ մասը զարգացնում է գործնական հմտությունները և ներառում է միջազգային բանակցությունների մոդելային վարժություններ, քաղաքական վերլուծություններ, դիվանագիտական արարողակարգ, իրապարակային խոսքը, ինչպես նաև ճանաչողական այցեր պետական հիմնարկներ և դեսպանատներ:

# ԵԱՀԿ աջակցությամբ Սյունիքի մարզում բացվել է անապահով երեխաների համար դպրոց

ԵԱՀԿ գրասենյակի Սյունիքի մասնաճյուղի աջակցությամբ Կապանում հիմնադրվել է հատուկ կրթական կենտրոն սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար: Մայիսի 19-ին կայացած հանդիսավոր բացման արարողությանը ներկա էին տեղական իշխանությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և կրթական հաստատությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև երեխաներ և ծնողներ: «Մենք հուսով ենք, որ կենտրոնը կօգնի երեխաներին ավելի լավ ինտեգրվել և զարգացնել նրանց հմտություններն ու ունակությունները՝ հանուն երեխաների իրավունքների պաշտպանության», - ասաց ԵԱՀԿ գրասենյակի տնտեսական և բնապահպանական ծրագրի ղեկավար Քրիստոֆ Օպֆերմանը: Դպրոցը վերակառուցել և կահավորել են Հայ առաքելական եկեղեցու Սյունիքի թեմը և տեղական իշխանությունները, իսկ կառավարումն իրականացնում է ԵԱՀԿ աջակցությամբ գործող Կապանի Կամանգ ռեսուրս կենտրոնը: Դպրոցը գործում է շաբաթը 4 օր՝ աջակցություն տրամադրելով Կապանի և շրջակա գյուղերի 65-70 անապահով երեխաներին, այդ թվում և անչափահաս մուրացկաններին: Հատուկ կազմված արվեստի և արհեստի ծրագրերը երեխաներին հնարավորություն են տալիս զարգացնելու իրենց ունակու-



թյունները այդ բնագավառներում, իսկ դպրոցի տարածքն օգտագործվում է երեխաների աշխատանքները ցուցադրելու համար: Կապանի բնապահպանական տեղեկատվության հանրային կենտրոնը (Aarhus) դպրոցում կազմակերպելու է շրջակա միջավայրի պահպանության, կենսաբազմազանության վերաբերյալ դասեր, ինչպես նաև՝ էքոլոսիսներ արգելափակումներ և մշակութային ու պատմական արժեքավոր վայրեր: Այս ծրագիրը ֆինանսավորվել է ԵԱՀԿ ամենամյա բարեգործական պարահանդեսի ընթացքում հավաքված գումարներից:

### ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ լույս է տեսել լրագրողների նկատմամբ բռնության և դատական գործերի մասին հոդվածների ժողովածու

Մարտի 3-ին Երևանում տեղի ունեցավ Հայաստանում 2008-2009 թթ-ին լրագրողների նկատմամբ բռնության, ճնշումների դեպքերի և դատական գործերի մասին հոդվածների ամփոփ ժողովածուի շնորհանդեսը:

Ժողովածուն հրատարակվել է «Հետաքննող լրագրողների ընկերակցություն» հասարակական կազմակերպության կողմից՝ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ: Դրանում գետեղված են լրագրողների նկատմամբ բռնության և ճնշումների յոթ դեպք և վերլուծված են գրապատրաստության և վիրավորանքի մեղադրանքներով դատական գործեր յոթ լրագրողների և լրագրողական կազմակերպությունների նկատմամբ՝ ընդգծելով, որ որոշ դեպքերում բռնարարները մնացել են չբացահայտված: Հոդվածները մաս հրատարակվել են «Հետաքննող լրագրողների» [www.hetq.am](http://www.hetq.am) կայքում:



Մասնավերջերից մեկն է: Բռնությունները լրագրողների նկատմամբ անբույրաբերի են, և եթե անպատիժ մնան կարող են նպաստել վախի և ինքնագրաքննության մթնոլորտի ձևավորմանը», - ասաց ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավարի պաշտոնակատար Կարել Հոֆստրան: Հրատարակությունը իրականացվել է ԵԱՀԿ գրասենյակի՝ Հայաստանում լրատվամիջոցների ազատության խթանմանն ուղղված ծրագրի շրջանակներում:

### ԵԱՀԿ աջակցությամբ հրատարակվել է ՀՀ Սահմանադրության մեկնաբանությունների ժողովածուն

Հունիսի 16-ին Հայաստանի ազգային պատկերասրահում հանրությանը ներկայացվեց ՀՀ սահմանադրության գիտագործնական մեկնաբանությունների ժողովածուի առաջին հրատարակությունը:

Այս տարի նշվում է Հայաստանի Սահմանադրության և Սահմանադրական դատարանի 15-ամյակը:

ԵԱՀԿ գրասենյակի և գերմանական տեխնիկական համագործակցության ընկերության (GTZ Armenia) աջակցությամբ տպագրված գրքույկը պատրաստվել է Հայաստանում իրավագիտության ոլորտում և օրինաստեղծ գործունեության մեջ նշանակալի ավանդ ունեցող 68 իրավագետների և գիտնականների կողմից: Ժողովածուն տրամադրում է ՀՀ սահմանադրության հիմնադրույթների մեկնաբանություններ, պարզաբանում նպատակների և սկզբունքների սահմանադրական և իրավական բնույթն ու էությունը: Այն մաս ներկայացնում է ՀՀ սահմանադրական դատարանի ընդունած որոշումների օրինակներ և ուղեմիջներ:

Միջոցառմանը ներկա էին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը և ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, ինչպես նաև պետական մարմինների, գիտական հաստատությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների, դիվանագիտական առաքելությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

### Այլ հրապարակումներ

Հետազոտություն Հայաստանում կրոնական հանդուրժողականության վերաբերյալ

Իրականացվել է 2009թ. «Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոն» ՀԿ-ի կողմից՝ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ: Չեկույցում ընդգրկված են հարցազրույցներ, այդ թեմայով մամուլի հրապարակումներ, հոդվածների և հետազոտությունների ինչպես նաև օրենսդրության վերլուծություն և առաջարկներ պետական մարմիններին:

Հայաստանում ձեռնարկություններ գրանցելու և ՓՄՉ-ների աջակցության ծրագրի մասին ձեռնարկներ

Այս երկու նորացված հրատարակությունները պատրաստվել են ԵԱՀԿ գրասենյակի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում, որն ուղղված է աջակցելու ձեռնարկատերերին, այդ ոլորտում քաղաքականություն մշակողներին:

Չեքոսլովակիայում, կալանավորված և դատաապարտված անձանց իրավունքների մասին ուղեցույց և գրքույկ

Ուղեցույցը և գրքույկը լրանշակվել են «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի կողմից՝ ԵԱՀԿ աջակցությամբ: Հրատարակումների նպատակն է օգնել քրեականադատական հիմնարկներին և պահման վայրերի աշխատակիցներին և իրազեկել ազատազրկվածներին իրենց իրավունքների մասին:

Թրաֆիքինգի դեմ պայքարի ձեռնարկ


Չեռնարկում ներկայացված են միջազգային և տեղական օրենսդրությունները, կանխամա և տուժողներին պաշտպանելու մեթոդները, հետաքննության և դատաապարտման մարտահրավերները: Չեռնարկը նախատեսված է թրաֆիքինգի դեմ պայքար իրականացնող իրավապահներին՝ դատախազներին, ոստիկաններին, սահմանապահներին և աշխատանքի տեսուչներին վերապատրաստելու համար: Գրքույկը ԵԱՀԿ, Աշխատանքի միջազգային կազմակերպության և ՄԱԿ-ի Չարգացման ծրագրի համատեղ ծրագրի արդյունք է:

Հայ երիտասարդների իրազեկվածությունն աշխատանքային իրավունքների և արհմիությունների դերի մասին

Հետազոտության նպատակն է ձևավորել քննարկման շրջանակներ աշխատանքային իրավունքների և աշխատանքի տեղավորման խնդիրների շուրջ: Այն նպատակ ունի հայ երիտասարդների շրջանում մեծացնել աշխատանքային իրավունքների մասին իրազեկվածությունը, ինչպես նաև արհմիությունների դերը այս իրավունքների պաշտպանության գործում:

## ՑՈՒՑԱՐԱՆԴԵՍՆԵՐ/ՄՐՑՈՒՅԹՆԵՐ

### Մամուլի ազատության միջազգային օրվան նվիրված ֆոտոցուցահանդես Երևանում



Մամուլի ազատության միջազգային օրվա կապակցությամբ մայիսի 3-ին Երևանում բացվեց «Մամուլի ազատություն. տեղեկատվության ազատության իրավունք» ֆոտոցուցահանդեսը:

Մեկշաբաթյա ցուցահանդեսը կազմակերպել էր «Տեղեկատվության ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ և ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ու ՄԱԿ-ի Հանրային տեղեկատվության վարչության երևանյան գրասենյակի հետ համագործակցությամբ: Միջոցառմանը ցուցադրված էին 30 ինքնատիպ լուսանկար, որոնք ընտրվել էին ներկայացված 300 աշխատանքներից:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակի ղեկավար դեսպան Սերգեյ Կապիժնովը, ողջունելով ցուցահանդեսը, նշեց, որ այն տեղեկատվության և խոսքի ազատության վերաբերյալ հանրության ընկալումները ներկայացնող ինքնատիպ միջոց է:

«Տեղեկատվության մատչելիությունը առանցքային դեր ունի մարդկային արժանապատվությունը հարգելու հարցում: Այն նաև հնարավորություն է տալիս քաղաքացիներին ակտիվ մասնակցություն ունենալ հանրային կյանքում և օգնում է նրանց իրականացնել իրենց այլ իրավունքները: Այս ցուցահանդեսը լավ հնարավորություն է ամրորողառնալ այս հարցերին», - ասաց Կապիժնովը:

Միջոցառման բացմանը ներկա էին լրագրողներ, պետական կառույցների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ:

#### ԵԱՀԿ-ի մասին

Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը՝ ԵԱՀԿ-ն գործում է հանուն 56 պետությունների [կայունության, բարօրության և ժողովրդավարության](http://www.osce.org)՝ համընդհանուր արժեքների շուրջ քաղաքական երկխոսության և գործնական աշխատանքների միջոցով՝ հետամուտ բարելավմանը:

ԵԱՀԿ երևանյան գրասենյակը հիմնադրվել է 2000թ.-ին օժանդակելու Հայաստանին ԵԱՀԿ առջև ստանձնած պարտավորությունների կատարմանը բոլոր երեք ուղղություններով՝ ռազմաքաղաքական, տնտեսական և բնապահպանական և մարդու իրավունքների ուղղություններով: Հավելյալ տեղեկությունների համար դիմել ԵԱՀԿ երևանյան գրասենյակ՝ [Մուկրուկյան 64/1 հեռ. 22 96 10/11/12](http://www.osce.org/erevan) էլ. փոստ՝ [yerevan-am@osce.org](mailto:yerevan-am@osce.org) վեբ կայք՝ [www.osce.org/erevan](http://www.osce.org/erevan)